

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածությունը  
2019-2020 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում իրականացված  
առցանց դասընթացներից և  
ուսանողների պատասխանների հետ դրանց համամետական  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*21.07.2020թ.*

2020թ. մարտի 13-ից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ ելնելով Հայաստանում նոր կորոնավիրուսով ստեղծված իրավիճակից, ուսումնառությունը շարունակվել է առցանց: Մասնաճյուղի դասախոսական կազմը ղեկավարության հետ միասին մեծ ջանքեր թափեցին առցանց ուսումնառությունը դարձնել լիարժեք, արդյունավետ, նպատակային: Դասախոսներն արագ վերանայեցին գիտելիքների մատուցմանն ու մասնագիտական կարողությունների ձևավորմանն ուղղված իրենց մոտեցումները, իրենց կողմից կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները: Նրանց համար կարևորվեցին ուսանողների հետ աշխատելու, նրանց ինքնուրույն աշխատելու որակները զարգացնելու, նաև ձեռքբերումները ցուցադրելու նոր ձևերն ու մեխանիզմները: Առցանց ուսումնառության ընթացքում դրսևորվեց դասախոսների պատրաստակամությունը կիրառելու ժամանակակից տեղեկատվական, ուսանողների ձեռքբերումների գնահատման առցանց տարբեր համակարգեր:

Պարզելու համար, թե 3-ամսյա առցանց կրթության ընթացքում ինչքանով է դասախոսներին հաջողվել իրականացնելու իրենց առջև դրված նպատակները, որքանով է ստացվել ուսանողներին ներգրավել առցանց ուսումնառության գործընթացին, հնարավոր է արդյոք առցանց իրականացնել ուսումնառություն և ինչպիսի՞ կազմակերպական, տեխնիկական ու անձնային խնդիրներ են ծագել այդ ժամանակահատվածում, մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը հունիսի սկզբին ուսանողների և դասախոսների շրջանում իրականացրել է առցանց հարցում: Ուսումնասիրությունը նպատակ ուներ պարզելու ուսանողների և դասախոսների բավարարվածությունը իրականացված առցանց ուսումնառությունից, հավաքագրելու թե՛ ուսանողների, և թե՛ դասախոսների առաջարկներն առցանց ուսուցման հետագա բարելավման համար:

Ուսանողների շրջանում անցկացրած առցանց հարցման արդյունքները ՄԿՈԱ բաժինը վերլուծել և ներկայացրել է մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցներին: Դրանք տեղադրված են մասնաճյուղի պաշտոնական կայքում ([http://ijevan.yso.am/wp-content/uploads/2015/12/Hashv\\_arcanc\\_us\\_2020.pdf](http://ijevan.yso.am/wp-content/uploads/2015/12/Hashv_arcanc_us_2020.pdf), [http://ijevan.yso.am/wp-content/uploads/2015/10/Ardjunqner\\_arcanc\\_us\\_2020.pdf](http://ijevan.yso.am/wp-content/uploads/2015/10/Ardjunqner_arcanc_us_2020.pdf)):

Նշենք, որ դասախոսական և ուսանողական հարցումները կատարվել են նույն հարցերի շուրջ, որպեսզի հնարավորություն լինի պարզելու նույն հարցի վերաբերյալ դասախոսների և ուսանողների դիրքորոշումը և կատարելու համեմատական վերլուծություն:

Վերլուծության մեջ նախ ներկայացվել են դասախոսների կարծիքները դիտարկվող հարցի վերաբերյալ, ընդ որում ըստ առանձին ամբիոնների, որպեսզի յուրաքանչյուր ամբիոն կարողանա այդ արդյունքներից դուրս բերել իր խնդիրները, ապա ներկայացվել են ուսանողների ընդհանուր կարծիքները համեմատության մեջ:

Հետևյալ վերլուծության մեջ ներկայացվում է մասնաճյուղի դասախոսների շրջանում անցկացված հարցման արդյունքները: Մասնաճյուղի 10 ամբիոնների ծանուցված 148 դասախոսներից հարցմանը մասնակցել է **93** դասախոս (**63%-ը**):


Ամբիոնի անունը	քանակը		Մասնակցության %	
	Ամբ .	Մասն .	Ամբ .	Ընդհ .
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության (ԸՄԲ)	21	12	57.1%	13.0%
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների (ԾԻՏ)	10	10	100.0%	10.9%
Հայոց պատմության (Պատմ)	18	11	61.1%	12.0%
Մանկավարժության և հոգեբանության (Մ/Հ)	22	17	77.3%	18.5%
Հայոց լեզվի և գրականության (ՀԼԳ)	9	8	88.9%	8.7%
Օտար լեզուների (ՕՏԼ)	27	8	29.6%	8.7%
Ընդհանուր տնտեսագիտության (ԸՏտ)	20	16	80.0%	17.2%
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության (Տուր .)	12	6	50.0%	6.5%
Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի (ԴԿԱ/Դ)	5	3	60.0%	3.3%
Գծանկարի, գունանկարի և դիզայնի (ԳԳՔ)	4	2	50.0%	2.2%
<b>Ընդամենը</b>	<b>148</b>	<b>93</b>	<b>62.8%</b>	

### 1. Ուսանողների ներգրավվածությունն առցանց դասընթացներին և կիրառվող տեղեկատվական համակարգերը

Ստեղծված արտակարգ իրավիճակում կարևոր է, թե ի՞նչ չափով են ուսանողները մասնակցել առցանց դասերին, և ավելի կարևոր է, թե ինչպիսի՞ օբյեկտիվ կամ այլ պատճառներ են եղել չմասնակցելու, կամ քիչ մասնակցելու համար: Ըստ ամբիոնների հարցմանը մասնակցած դասախոսների **60%-ից** ավելին փաստել է, որ ուսանողների **75%-ից** ավելին մասնակցել է դասերին .

	ԳԳՔ (2)	ԴԿԱ/Դ (3)	ԸՄԲ (12)	ԸՏտ (16)	ԾԻՏ (10)	ՀԼԳ(8)	Պատմ (11)	Մ/Հ (17)	Տուր. (6)	ՕՏԼ (8)	ԵՊՀ ԻՄ/92
<b>25-50 %</b>	0.0%	0.0%	8.3%	6.3%	10.0%	0.0%	<b>27.3%</b>	5.9%	0.0%	0.0%	<b>7.5%</b>
<b>50-75 %</b>	0.0%	33.3%	25.0%	37.5%	70.0%	50.0%	9.1%	11.8%	16.7%	25.0%	<b>29.0%</b>
<b>75-100%</b>	100.0 %	66.7%	66.7%	56.3%	<b>20.0%</b>	50.0%	63.6%	82.4%	83.3%	75.0%	<b>63.4%</b>


Պետք է նշել, որ ուսանողների կարծիքները գրեթե համընկնում են դասախոսների կարծիքների հետ, ինչը վկայում է, որ ուսանողներն ազնվորեն ներկայացրել են իրենց մասնակցության աստիճանը: Եվ կարևոր է, որ առցանց ուսումնառության ժամանակ մեր ուսանողները դրսևորել են իրենց բարձր պատասխանատվությունը ուսման նկատմամբ, նաև բարեխիղճ վերաբերմունք և հարգանք դասախոսների և ղեկավարության տանջալից աշխատանքի նկատմամբ:



Դասերին չմասնակցելու, կամ քիչ մասնակցելու համար ուսանողներից շատերը, միզուցե, ունեցել են իրենց պատճառները, որը կարճ ժամանակում հնարավոր չի եղել հաղթահարել,

որովհետ ամեն ինչ սկսվել է միանգամից, համապատասխից: Այդ մասին նրանք ներկայացրել են դասախոսներին առցանց հանդիպումների կամ ընկերների միջոցով:


Դասախոսները ներկայացրել են այն խնդիրները, որոնք խոչընդոտել են ուսանողներին: Ակնհայտ է, որ այդ պատճառների մեջ ամենամեծ ծավալը բաժին է հասել թույլ կապին՝ հարցմանը մասնակցած դասախոսների **76,7%-ը** դա համարել է ամենամեծ խնդիրը: Հաջորդ խնդիրները կապված են **համացանցի** և **անհրաժեշտ տեխնիկական միջոցների** բացակայության հետ և այլն:



Թեև մասնաճյուղի ղեկավարությունը տեխնիկայի հետ կապված փորձել է աջակցել իր ուսանողներին, նաև դասախոսներին, սակայն դրանք եղել են սահմանափակ թվով, որովհետև մասնաճյուղն այդ պահին այդքան տեխնիկական միջոցների հնարավորություն չի ունեցել:

Թույլ կապի և համացանցի բացակայության հետ կապված հարցերը մասնաճյուղի հնարավորություններից և իրավասություններից դուրս են, հավանաբար այստեղ մասնաճյուղն ակնկալում է հետագայում մարզի ղեկավարության և համապատասխան բջջային օպերատորների աջակցությունը և համագործակցությունը:

Հարկ է նշել, որ մասնաճյուղի ղեկավարությունը համավարակով ստեղծված իրավիճակում բավականին արագ որոշումներ կայացրեց և ուղղորդեց դասախոսներին և ուսանողներին, ստեղծվեց անհրաժեշտ տեղեկատվական և ծրագրային հենք առցանց դասերն անխափան և ըստ դասացուցակի անցկացնելու համար, ինչում իհարկե մեծ էր մասնաճյուղի տեղեկատվական համակարգերի զարգացման և սպասարկման բաժնի դերն ու պատրաստակամությունը: Ժամանակին և արագ գործարկվել է Zoom համակարգը, դասախոսներին և ուսանողներին տրամադրվել են այդ համակարգի հետ աշխատելու ուղեցույցներ, ինչի մասին էլ վկայում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները. նրանց **99%-ը** փաստում է, որ առցանց ուսումնառությունն իրականացվել է հիմնականում Zoom համակարգով:




Իսկ ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսներն ուսանողների հետ աշխատել են նաև էլ. փոստերի միջոցով՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ նյութերը, տնային աշխատանքները և այլն: Դասախոսները նշել են, որ ուսանողների հետ աշխատել են նաև Messenger և WatsApp համակարգերի միջոցով:

## 2. Անհրաժեշտ գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռքբերումը

Ինչպես ցույց են տալիս արդյունքները, դասախոսներն առցանց ուսումնառության ընթացքում կիրառել են տարբեր տեղեկատվական համակարգեր և ծրագրեր, նպատակ ունենալով առավելագույնս օգնել, աջակցել ուսանողներին ավելի հեշտությամբ, արագ և արդյունավետ ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքները և մասնագիտական կարողությունները: Անմիջական շփման, քննարկումների բացակայության պայմաններում կարևոր է, որ դասախոսների կողմից կիրառվող տեղեկատվական համակարգերը և մեթոդները կարողանան ապահովել արդյունավետ ուսուցում: Կիսամյակը հաղթահարելուց հետո հետաքրքիր էր, թե դասախոսներն իրենք ինչ կարծիքի են այդ համակարգերի միջոցով արդյունավետ ուսուցման կազմակերպման հնարավորության վերաբերյալ: Ըստ հարցման արդյունքների նրանց **60%-ը** (54,8+4,3) փաստում է, որ կիրառվող տեղեկատվական առցանց համակարգերը հիմնականում և ամբողջությամբ ապահովում են արդյունավետ ուսուցում:



	ԳԳՔ (2)	ԴԿԱ /Դ(3)	ԸՄԲ (12)	ԾԻՏ (10)	ՀԼԳ (8)	Պատմ (11)	Մ/Հ (17)	ՕՏԼ (8)	ԸՏևս (16)	Տուրիզմ (6)	ԵՊՀ ԻՄ	
<b>չեն ապահովում</b>					1				1		2	2.2%
ապահովում են մասամբ	1	1	6	3	4	7	7	1	5	1	36	38.7%
<b>հիմնականում ապահովում են</b>		2	6	6	3	4	9	7	10	4	51	54.8%
<b>ամբողջությամբ ապահովում են</b>	1			1			1			1	4	4.3%
<b>Ընդամենը</b>	2	3	12	10	8	11	17	8	16	6	93	

Իսկ ահա հարցմանը մասնակցած 288 ուսանողների միայն **35%-ն** (30,2+4,2) է համամիտ, որ կիրառված տեղեկատվական համակերգերն ապահովում են արդյունավետ ուսուցում: Նրանց **50,3%-ը** (145 ուսանող) գտնում է, որ դա հնարավոր է մասամբ, իսկ **15,3%-ը** (44 ուսանող) գտնում է, որ կիրառվող տեղեկատվական համակարգերը չեն ապահովում արդյունավետ ուսուցում:




Սա իհարկե մտահոգիչ ցուցանիշ է: Դասախոսները գտնում են, որ հիմնականում ապահովվում է, իսկ ուսանողներն այդ կարծիքին չեն: Այստեղ, մտածում ենք, որ կոնկրետ դրված հարցի դեպքում, ըստ ուսանողների պատասխանների, կիրառվող համակարգերը թույլ չեն տալիս ապահովել արդյունավետ ուսուցում: Իսկ սա նշանակում է, որ մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների ինդիքն է, պարզել, թե այլ ավելի արդյունավետ ի՞նչ միջոցներ կարելի է առաջարկել ուսանողներին առցանց ուսումնառության ժամանակ, և ամենակարևորը, իսկապե՞ս կիրառվողները արդյունավետ չեն, թե՞ դասախոսական կազմը այն չի կարողացել կիրառել համապատասխան մակարդակով: Մրանք հարցեր են, որոնց պատասխանները կարևոր են, հետազայում, նման իրավիճակում ճիշտ լուծումներ գտնելու համար: Նշենք, որ մասնաճյուղում պարբերաբար իրականացվում են դասախոսների վերապատրաստման դասընթացներ, որոնց ժամանակ նրանց ներկայացվում են ուսումնառության կազմակերպման և ուսանողների ձեռքբերումների գնահատման առցանց տարբեր համակարգեր:

Ինչպես ցույց տվեցին դասախոսների պատասխանները, կիրառվող տեղեկատվական համակարգերի միջոցով կարելի է հիմնականում ապահովել արդյունավետ ուսուցում: Հետևաբար տեղին են հաջորդ երկու հարցերը, որոնց պատասխանները հնարավորություն կտան պարզել, թե առցանց ուսումնառության ժամանակ որքանով է հնարավոր փոխանցել լիարժեք գիտելիքներ և ձևավորել անհրաժեշտ մասնագիտական կարողություններ:




Դիագրամներում ներկայացված են դասախոսների կարծիքներն ըստ ամբիոնների, որոնք վկայում են, որ առցանց ուսումնառության պայմաններում հիմնականում հնարավոր է ուսանողներին գիտելիք փոխանցել, իսկ մասնագիտական կարողություններ ձևավորել հնարավոր է մասամբ:

Հարցմանը մասնակցած դասախոսների **63,5%-ը** (57+6,5) գտնում է, որ առցանց ուսուցմամբ հիմնականում և ամբողջությամբ կարելի է իրականացնել գիտելիքների փոխանցում, սակայն ուսանողներն այդ կարծիքին չեն. նրանց **70%-ը** (51,7+18,1) փաստում է, որ դա հնարավոր է մասամբ, կամ ուղղակի հնարավոր չէ: Այսինքն, սա նշանակում է, որ չնայած դասախոսների ջանքերին և փնտրտուքներին, ուսանողները բավարարված չեն առցանց ուսուցմամբ իրենց կողմից ձեռք բերած գիտելիքների մակարդակից: Բաց հարցերում նրանք նշել են, որ դա պայմանավորված է դասախոսի հետ անմիջական շփման բացակայությամբ և դասընթացի մատուցման համար տեղեկատվական համակարգերի սահմանափակ հնարավորություններով, ինչպես նաև դասընթացների ժամանակ կապի հաճախակի ընդհատումներով:



Հարցման արդյունքներով **դասախոսների կեսը** գտնում է, որ առցանց ուսուցմամբ հնարավոր է հիմնականում և ամբողջությամբ ձևավորել մասնագիտական կարողություններ, իսկ ահա ուսանողներն այդ կարծիքին չեն. նրանց **49%**-ը փաստում է, որ մասնագիտական կարողություններ իրենց մոտ ձևավորվել են մասամբ, իսկ **31%**-ը միանշանակ պնդում է, որ հնարավոր չէ առցանց ուսուցմամբ ձևավորել մասնագիտական կարողություններ: Իհարկե, այս արդյունքների մեջ իրենց ազդեցությունն ունեն մասնաձյուղում իրականացվող մի շարք առնձնահատուկ կրթական ծրագրերն իրենց վերջնարդյունքներով, ինչպիսիք են կիրառական արվեստի ֆակուլտետում իրականացվող 2 կրթական ծրագրերը, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ծրագիրը, նույնիսկ օտար լեզուների 3 կրթական ծրագրերի ուսանողներն այդ կարծիքին են:





Չնայած դասախոսներն առցանց ուսուցման ժամանակ հիմնական շեշտը դրել են ուսանողների ինքնուրույն աշխատելու և մասնագիտական համապատասխան կարողություններ ձեռք բերելու համար անհատական աշխատանքների իրականացման վրա, այնուամենայնիվ, ուսանողները բավարարված չեն առցանց ուսուցման տված հնարավորություններից թե՛ գիտելիքների ստացման, և թե՛ մասնագիտական կարողությունների ձևավորման և զարգացման առումով:

Այս համեմատական արդյունքները վկայում են, որ դասախոսները բավականին աշխատանք ունեն կատարելու ուսումնառության գործընթացի բարելավման ուղղությամբ: Պետք է մշակել նոր մոտեցումներ գիտելիքների մատուցման և ուսանողների կողմից դրանց մաքսիմալ ընկալման համար, նաև գործիքներ՝ ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորման և զարգացման համար:

### 3. Ուսումնական նյութերի աղբյուրները և ռեսուրսները


Հարցման շրջանակներում դասախոսները նշել են այն ուսումնական նյութերն ու ռեսուրսները, որոնց միջոցով իրականացրել են ուսումնառության գործընթացը, տրամադրել են ուսանողներին, ուղղորդել են ինքնուրույն աշխատելու և այլն: Դրանց թվում են սեփական և այլ հեղինակների դասախոսությունները, էլեկտրոնային գրքերը, համացանցային հղումները, շնորհանդեսները և այլն: Ուսանողների պատասխաններն էլ հիմնավորում են նման աննախադեպ և ոչ ստանդարտ պայմաններում դասախոսական կազմի բարեխիղճ աշխատանքը և պատրաստակամությունը հնարավոր բոլոր միջոցներով օգնելու ուսանողներին գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռքբերման ճանապարհին:



Ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսները չեն բավարարվել միայն սեփական դասախոսություններով և տրամադրել են ուսումնական բազմաթիվ նյութեր: Այդ ցանկանում, իհարկե, մեծ տեղ են զբաղեցնում սեփական դասախոսությունները և ցուցադրությունները:

Ընթացիկ ուստարվա երկրորդ կիսամյակում իրականացված առցանց կրթության պայմաններում ուսումնական նյութերի շարքում կարևորվել են նաև մասնաճյուղի **Էլեկտրոնային գրադարանի պաշարները**: Դասախոսներն իրենց դասընթացների փաթեթներում (պորտֆոլիոներում), որոնք տրամադրվում են նաև ուսանողներին, պարտադիր նշում են մասնաճյուղի գրադարանում առկա գրականության մասին: Չնայած մասնաճյուղի գրադարանային պաշարները մշտապես համարվում են ժամանակակից մասնագիտական գրականությամբ, պարտադիր թվայնացվում և տրամադրվում են ուսանողներին, այնուամենայնիվ, նախորդ տարիների տարբեր ուսումնասիրությունների արդյունքներով ուսանողները մշտապես բավարարված չեն եղել գրադարանում առկա մասնագիտական գրականության որակից և քանակից: Եվ հետաքրքիր է, որ նմանատիպ արդյունքներ գրանցվել են նաև այս հարցման շրջանակներում:

Հարցմանը մասնակցած դասախոսների **46,2%-ը** և ուսանողների **43%-ը** նշել են, որ






մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարներն առցանց ուսուցման պայմաններում մասամբ են բավարարում, իսկ համապատասխանաբար **11,8%-ը** և **18,1%-ը** գտնում են, որ չեն բավարարում: Այստեղ նույնպես իրենց դերն ունեն իրականացվող հատուկ կրթական ծրագրերը:

Ուղղակի պետք է փաստել, որ և՛ դասախոսների, և՛ ուսանողների գրեթե **40%-ը**, այնուամենայնիվ, բավարարված են մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարներից: Այսինքն դասախոսների կողմից հանձնարարված գրքերի էլեկտրոնային կամ թվայնացված տարբերակներն առկա են գրադարանում: Բնարկե, մասնաճյուղի ղեկավարության համար սա նույնպես առաջնահերթ և արագ լուծելու խնդիր է, ինչին պետք է աջակցեն ամբիոնները՝ գրադարանի աշխատակիցներին ներկայացնելով անհրաժեշտ մասնագիտական գրականության ցանկը, ձեռք բերելու հնարավորությունները և այլն:

Արդյունավետ ուսուցման հասնելու գործում կարևոր նախապայման են դասախոսների կողմից ընտրված և կիրառվող **դասավանդման** տարրեր և բազմազան ձևերը: Առցանց ուսուցումն իր հետ առաջ բերեց մարտահրավերներ, որոնց հաղթահարելու ճանապարհին դրանց մի մասն իրեն արդարացրեց, մյուսները ցույց տվեցին իրենց թույլ կողմերը և պահանջում են համապատասխան վերանայումներ:


Այն հարցին, թե դասավանդման ո՞ր ձևերն են ավելի արդյունավետ առցանց ուսուցման դեպքում դասախոսների և ուսանողների կարծիքներն էապես տարբերվում են:



Կիսամյակի ավարտին դասախոսներն ամփոփելով ուսանողների հետ համատեղ իրենց գործունեության արդյունքները հարցման շրջանակներում փաստել են, որ առցանց ուսուցման պայմաններում հիմնականում դասախոսություններն ու ուսանողների ինքնուրույն աշխատանքներն են արդյունավետ: Այդպես են կարծում հարցմանը մասնակցած դասախոսների համապատասխանաբար **71%-ը** և **61,3%-ը**, իսկ **39,8%-ը** նշում են գործնական դասերն ու սեմինար պարապմունքները: Ուսանողների կարծիքները դասավանդման բոլոր այս ձևերի արդյունավետության վերաբերյալ այնքան էլ բարձր չեն: Դասավանդման նշված ձևերն արդյունավետ է համարում միայն հարցմանը մասնակցած ուսանողների **30%-ից** քիչ մասը:

#### 4. Ընթացիկ ծանրաբեռնվածությունը և գնահատումը

Առցանց ուսուցման պայմաններում դասախոսների համար մեծագույն խնդիր է լսարանին մշտապես ուշադրության կենտրոնում պահելը, նրանց ակտիվ մասնակցության ապահովումը, որում քիչ չէ նաև ուսանողների պատրաստակամությունն ու ցանկությունը՝ դառնալու մասնակից քննարկումներին, տալ հարցեր և պատասխանել հարցերին: Առցանց ուսուցման պայմաններում ուսանողների ներգրավվածության վերաբերյալ դասախոսների և ուսանողների կարծիքները տարբերվում են: Մի հարցում նրանք համակարծիք են. դասախոսների **41%-ը** և ուսանողների **45%-ը** վկայում են, որ ուսանողները **հիմնականում լսում են և երբեմն հարցեր են տալիս:**



Իսկ ահա, ինչպես փաստում են ներկայացված թվերը, մնացած դեպքերում դասախոսների և ուսանողների կարծիքներն էապես տարբերվում են: Օրինակ, դասախոսների գրեթե **50%-ը** գտնում է, որ ուսանողները հաճախակի հարցեր են տալիս, թեպետ ուսանողներն իրենց մասին այդ կարծիքին չեն, կամ դասախոսների **գրեթե կեսը** վկայում է, որ ուսանողները փորձում են պարտադիր պատասխանել հարցերին, իսկ ուսանողները նույնպես այդ կարծիքին չեն, կամ նորից դասախոսների **գրեթե կեսը** նշում է, որ ուսանողները հիմնականում լսում են և հազվադեպ պատասխանում հարցերին, իսկ ուսանողներն այդ կարծիքին չեն: Այս անհասկանալի իրավիճակում հարց է առաջանում, թե ուսանողները, այնուամենայնիվ, ըստ իրենց ինչպես են ներգրավվում կամ մասնակից դառնում դասին՝ միայն լսում են: Սրանից հետևում է, որ դասախոսներն ավելի շատ մատուցում են, ավելի քիչ քննարկում կամ լսում: Սա նույնպես մարտահրավեր է առցանց ուսուցման դեպքում, եթե մտածենք, որ ուսանողները ճիշտ են ընկալել հարցադրումը և պատասխանել են անկեղծ: Եթե այդպես է, ապա դասախոսները պետք է վերանայեն դասի վարելու և ուսանողներին դասապրոցեսի մեջ ներգրավելու իրենց մոտեցումները:

Ուղղակի որպես այս հարցի ամփոփում կարելի է փաստել, որ ակտիվ ուսանողներն ակտիվ են նաև առցանց ուսուցման ժամանակ, իսկ մեծ թվով ուսանողների պասիվությունը դժվար է ըմբռնել: Հակված ենք մտածելու, որ նրանց պասիվության պատճառը անտարբերությունը չէ, միգուցե կան այլ տեխնիկական, ծրագրային, սոցիալական պատճառներ, որոնք խանգարում են նրանց մի մասին ակտիվ ներգրավված լինել դասին: Սրանք խնդիրներ են, որոնց մասին պետք է մտածել և պատրաստ լինել լուծելու դրանք, եթե նորից առցանց ուսուցման անհրաժեշտություն լինի:

Մովորելու և ձեռքբերումներն ամրապնդելու համար ուսումնառությունը ենթադրում է ուսանողների ավելի շատ **ինքնուրույն աշխատանք**, ինքնակրթություն և ինքնաարտահայտում:

Այսինքն, ուսանողների մասնագիտական որակների ձևավորման գործում կարևոր են ինքնուրույն աշխատանքները, և դասախոսներն իրենց ընթացիկ առաջադրանքներով նրանց համար ապահովում են ինքնուրույն աշխատելու որոշակի տիրույթ և ծավալ:


Իսկ ահա առցանց ուսուցման պայմաններում ուսանողներին ինքնուրույն աշխատեցնելու գործընթացն իսկապես առաջին պլան է մղվում և առավել կարևորվում, քանի որ բացակայում են լսարանային պրակտիկ աշխատանքները: Լավ արդյունքների հասնելու համար դասախոսներից պահանջվում է ապահովել անհրաժեշտ համագործակցային, թիմային և խմբային աշխատելու միջավայր: Հետևաբար, ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել պարզելու, թե առցանց ուսուցման պայմաններում դասախոսներն ի՞նչ չափով են փոխել ուսանողների ինքնուրույն աշխատանքների ծավալը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսների 40-55%-ն ըստ բոլոր ամբիոնների չի փոխել ինքնուրույն աշխատանքների ծավալը:

	ԳԳՔ (2)	ԴԿԱ/ Դ(3)	ԸՄԲ(1 2)	ԸՏԽ (16)	ԾԻՏ (10)	ՀԼԳ (8)	Պասոմ (11)	Ս/Հ (17)	Տուրիզմ (6)	ՕՏԼ (8)	ԵՊՀ ԻՄ	
չեն փոխել	1	2	7	5	4	3	7	5	2	2	38	40.9%
նվազեցրել են			2	1		1	1	1			6	6.5%
ավելացրել են	1	1	3	10	6	4	3	11	4	6	49	52.7%

Տրամաբանական է, որ առցանց ուսուցման պայմաններում պետք էր ավելացնել ինքնուրույն աշխատանքները, և այդպես են վարվել հարցման մասնակիցների գրեթե 53%-ը:


Իսկ ինչ կարծիքի են ուսանողներն ինքնուրույն աշխատանքների ծավալի փոփոխման մասին: Հետաքրքիր է, որ ուսանողների գրեթե 57%-ը նույնպես գտնում է, որ դասախոսներն ավելացրել են ինքնուրույն աշխատանքների ծավալը, բայց ի տարբերություն դասախոսների, նրանց 13,5%-ը վկայում է, որ այն նվազեցվել է:



Ուղղակի այստեղ խնդիր է առաջանում ուսանողների ընդհանուր ծանրաբեռնվածության մակարդակի հետ կապված, որ ինքնուրույն աշխատանքների ծավալի մեծացումը հակադարձ ազդեցություն չունենա ուսանողների վրա՝ առաջ բերելով առողջական, սոցիալական և այլ տարատեսակ խնդիրներ:

Ուսումնասիրության գործընթացի անբաժանելի և ամենաբարդ մասը դա ուսանողների ձեռքբերումների օբյեկտիվ և թափանցիկ գնահատումն է, որն առցանց ուսուցման պայմաններում առաջ է բերում նոր խնդիրներ, պահանջում նորովի մոտեցում, նոր մեխանիզմների և գործիքների կիրառում: Ուսանողի համար ոգևորիչ և խթանիչ գործոն է հանդիսանում իր կատարած յուրաքանչյուր աշխատանքի գնահատումը, ինչը որքան կարևոր է, նույնքան էլ բարդ է, քանի որ ոչ օբյեկտիվ գնահատականը բացասական է ազդում ուսանողների մոտիվացիայի վրա: Դրա համար էլ այն դասախոսների առջև դրված կարևորագույն խնդիրներից է:

Ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել պարզելու, թե որքանով են դասախոսներն առցանց ուսուցման ժամանակ իրականացրել առաջադրանքների գնահատում:




Հարցման արդյունքներից երևում է, որ ոչ բոլոր դասախոսներն են կատարել գնահատում: Հարցմանը մասնակցած դասախոսների 60%-ը փաստել է, որ պարտադիր կատարել է գնահատում, չնայած այդ մասին վկայել են ուսանողների միայն 38%-ը: Հարցմանը մասնակցած ուսանողների 55,6%-ը նշել է, որ դասախոսները մասամբ են գնահատում կատարել, ինչի հետ համամիտ են դասախոսների միայն 29%-ը: Կարևոր է, որ գնահատում չկատարած դասախոսների թիվը քիչ է՝ նաև ըստ ուսանողների կարծիքի:

Հարցման արդյունքները վկայում են, որ ուսանողներն իրենք նպատակադրված են, որ դասախոսները գնահատեն իրենց աշխատանքը, հնարավորություն տան դրսևորելու իրենց ձեռքբերումները, այդ պատճառով էլ արտահայտել են իրենց դժգոհությունը, փաստելով, որ դասախոսները գնահատում կատարել են մասամբ, կամ ուղղակի չեն կատարել:

### 5. Քննությունների անցկացման մեթոդները և ակադեմիական ազնվության պահպանումը


Գնահատման համար կարող է նաև մեթոդի ընտրությունը: Մասնաճյուղի դասախոսների կողմից մշտապես օգտագործվել են տարբեր մեթոդներ: Բայց ստեղծված իրավիճակում ավելի կարևոր է, թե առցանց քննության ո՞ր տարբերակը թույլ կտա ճիշտ գնահատել ուսանողի ձեռքբերումները

Այս հարցադրման պատասխաններում նույնպես ուսանողները եղել են առավել ազնիվ և ինքնատիպ, ընդ որում գրեթե հավասար չափով կարևորվել են թեստային, համակցված և միայն բանավոր քննությունների ձևերը:



Նշենք, որ մասնաճյուղի դասախոսների համար իրականացվել է վերապատրաստման դասընթաց գույլ ձևաչափի հնարավորություններն առցանց քննությունների համար կիրառելու վերաբերյալ: Դասախոսներն իրենց կարծիքներում արտահայտել էին դասընթացից իրենց բավարարվածությունը, նաև փաստել, որ այն իսկապես կօգնի իրենց առցանց կազմակերպել քննությունները և ապագայում նաև կիրառել դասընթացների իրականացման ողջ ընթացքում: Իսկ այս հարցման արդյունքները մատնանշում են, որ դասախոսների հիմնական մասն այդ ձևաչափն իսկապես կիրառել է քննական գործընթացում: Մասնավորապես, ըստ ուսանողների դասախոսները քննությունների համար կիրառել են գնահատման թե՛ թեստային, թե՛ բանավոր, և թե՛ համակցված ձևերը: Իսկ ահա դասախոսական կազմը՝ գրեթե **70%**-ը, հիմնականում հակված է քննությունների համակցված անցկացման տարբերակին:

Մակայն պետք է խոստովանել, որ չնայած դասախոսների ջանքերին, կիրառած տարբեր մեթոդներին և մոտեցումներին, ու դրանց թափանցիկ կազմակերպմանը, միևնույնն է, քննությունների առցանց իրականացման ժամանակ հնարավոր չի եղել ուսանողներին համոզել դրանց օբյեկտիվության, անաչառության մեջ: Ուսանողների գրեթե **70%-ը** գտնում է, որ առցանց քննությունների ժամանակ հնարավոր չէ ապահովել **ակադեմիական ազնվություն**, ի հակակշիռ նրանց, դասախոսների **58%-ը** գտնում է, որ դա հնարավոր է:



Հաշվի առնելով դասախոսների կարծիքը, այնուամենայնիվ պետք է նշել, որ ժամանակակից տեխնիկական տարբեր միջոցների կիրառումը ուսանողների կողմից գրեթե անհնար են դարձնում քննական գործընթացի վերահսկումը անկախ նրանց ձևից՝ գրավոր, թե՛ բանավոր: Ուսանողներն իրենց ազնիվ պատասխանաններով հիմնավորել են այդ տեսակետը, հետևաբար առցանց քննություններում ակադեմիական ազնվություն ապահովելու համար դասախոսները բավականին աշխատանք ունեն կատարելու: Երևի պետք է հրաժարվել ուսանողների ձեռքբերումները գնահատելու դասական մեթոդներից, պետք է վերանայել քննական տոմսերը, փոխել մոտեցումները, ներառել ավելի շատ ուսանողների վերլուծական մտքի և եզրահանգումներ կատարելու կարողությունները բացահայտող հարցեր և առաջադրանքներ, և գնահատել ուսանողի մտածողությունը, ոչ թե միայն գիտելիքը:


Ընդհանրացնելով հարցման արդյունքները կարելի է եզրակացնել, որ մասնաճյուղում հաջողվել է արդյունավետ իրականացնել առցանց ուսուցում, ապահովել գիտելիքի և մասնագիտական կարողությունների փոխանցում, ուսանողի ձեռքբերումների գնահատում և այլն:

Հարցմանը մասնակցած բոլոր դասախոսները՝ **100%-ը** փաստել են, որ բավարարված են մասնաճյուղում առցանց ուսուցման կազմակերպումից:

	ԳԳՔ (2)	ԴԿԱ/Դ(3)	ԸՄԲ (12)	ԸՏՏԱ (16)	ՄԲՏ (10)	ՀԼԳ (8)	Պատմ (11)	Մ/Հ (17)	Տուր . (6)	ՕՏԼ (8)	ԵՊՀ ԻՄ	
բավարարված չեմ											0	0%
բավարարված եմ մասամբ	1	1	1	3	1	1	3	2			13	14.0%

հիմնականում բավարարված են		1	9	11	6	5	5	13	2	4	56	60.2%
ամբողջությամբ բավարարված են	1	1	2	2	3	2	3	2	4	4	24	25.8%

Հարկ է նշել, որ ուսանողների **գերակշիռ մասը՝ 84,4%-ը**, նույնպես բավարարված է մասնաճյուղում առցանց ուսուցման կազմակերպումից: Ընդ որում, դասախոսների **86%-ը** նշել է, որ բավարարված է հիմնականում կամ ամբողջությամբ, այն դեպքում, երբ ուսանողների միայն **42%-ն** է այդ կարծիքին, և նրանց մյուս **42%-ը** բավարարված է մասամբ:



Ու քանի որ առցանց ուսուցումից չբավարարված կամ ոչ լիարժեք բավարարված այդքան շատ ուսանող կա, ապա ուրեմն մասնաճյուղը շատ խնդիրներ ունի լուծելու: Նախ վերհանելու ուսանողների առցանց կրթությունից բավարարված չլինելու պատճառները, ապա հնարավորինս լուծել դրանք հետագայի համար:

Նշենք, որ հարցման շրջանակներում բաց հարցերի միջոցով փորձել ենք վեր հանել այդ խնդիրները, առանձնացնելով ուսանողների և դասախոսների կողմից նշած առցանց ուսուցման **դրական և բացասական** կողմերը: Ուսանողների կարծիքները ներկայացվել են առանձին վերլուծությամբ:

Դասախոսները որպես առցանց ուսուցման **դրական կողմեր նշել են** միասնական հարթակի առկայությունը և հետևողականությունը, պատշաճ կազմակերպվածությունը, օպերատիվությունը, աջակցությունը և այլն: Նաև ուսանողների մոտ ճանապարհային և տրանսպորտի խնդիրների բացակայությունը, որը հնարավորություն է տալիս ավելի շատ ներգրավվել դասերին:

Որպես **բացասական կողմ** դասախոսներն առանձնացրել են տեղեկատվական համակարգերից օգտվելու ցուցումների թերի լինելը կամ բացակայությունը, հղումների համընկնումը, չափից շատ հետևողականությունը, մի քանի անձանց կողմից վերահսկողությունը, հղումների հաճախակի փոփոխությունները, ակադեմիական միջավայրի բացակայությունը, շուրջօրյա ծանրաբեռնվածությունը, թույլ կապը, տեղեկատվական տեխնոլոգիաներին անբավարար տիրապետելը և այլն: Դասախոսների կողմից նշված առցանց ուսուցման ամենաբացասական կողմն, իհարկե, մարդկային շփումի բացակայությունն է:

Դասախոսական կազմի կողմից առաջադրված տեխնիկական խնդիրները անշուշտ հնարավորինս կհարթվեն: Նշենք, որ դասախոսների **26,5%-ն** առցանց ուսուցման կազմակերպման գործընթացում թերություններ չի արձանագրում:

Ամփոփելով հարցման արդյունքները, դասախոսների և ուսանողների կարծիքները առցանց ուսուցման վերաբերյալ, ՄԿՈԱ բաժինը ֆակուլտետների ղեկաններին, ամբիոնների

վարիչներին և առցանց ուսումնառության արդյունավետ կազմակերպման գործում շահագրգիռ բոլոր կողմերին առաջարկում է.

✓ ուսումնասիրել դասերին ուսանողների չմասնակցելու, կամ քիչ մասնակցելու պատճառները, և պատճառներից կախված մշակել նրանց մասնակցության ակտիվացման մոտեցումներ,

✓ պարզել, թե տեղեկատվական արդյունավետ ի՞նչ միջոցներ կարելի է առաջարկել ուսանողներին առցանց ուսուցման ժամանակ,

✓ պարզել, թե իսկապե՞ս կիրառվող տեղեկատվական համակարգերն իսկապես արդյունավետ չեն եղել, թե՞ դասախոսական կազմը այն չի կարողացել կիրառել համապատասխան մակարդակով, և անհրաժեշտության դեպքում դիմել ՄԿՈԱ բաժնին՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար,

✓ առցանց ուսուցման ժամանակ հիմնական շեշտը դնել ուսանողների ինքնուրույն աշխատելու և մասնագիտական համապատասխան կարողություններ ձեռք բերելու համար անհատական աշխատանքների իրականացման վրա, ապահովել անհրաժեշտ համագործակցային, թիմային և խմբային աշխատելու միջավայր,

✓ աջակցել գրադարանի աշխատակիցներին՝ ներկայացնելով անհրաժեշտ մասնագիտական գրականության ցանկը,

✓ վերանայել դասը վարելու և ուսանողներին դասապրոցեսի մեջ ներգրավելու մոտեցումները, առաջարկել և կիրառել նոր արդյունավետ մեթոդներ,

✓ նպատակահարմար է կատարել ուսանողների ցանկացած աշխատանքի գնահատում անկախ ծավալից, հնարավորություն տալ նրանց դրսևորելու իրենց ձեռքբերումները,

✓ քննությունները կազմակերպել և անցկացնել թափանցիկ և օբյեկտիվ, հրաժարվել ուսանողների ձեռքբերումները գնահատելու դասական մեթոդներից, փոխել մոտեցումները, ներառել ավելի շատ ուսանողների վերլուծական մտքի և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունները բացահայտող հարցեր և առաջադրանքներ, գնահատել ուսանողի մտածողությունը, այլ ոչ միայն գիտելիքը,

✓ վերհանել ուսանողների առցանց կրթությունից բավարարված չլինելու հիմնական պատճառները, ապա առաջարկել դրանց լուծելու մոտեցումներ:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***